ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ (Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ)։ 3 հոկտեմբերի (ՏԱՍՍ-ի թղթ. Ս. Սախնո, Ա. Կազնաչեև)։ Հասարակական կարգի ապահովում, ճանապարհների վերականգնում. սրանով չեն սահմանափակվում ԼՂԻՄ-ում գտնվող ներքին զորքերի ֆունկցիաները։ Այժմ նրանք զբաղվում են նրանով, որ մթերքներ են փոխադրում Ստեփանակերտ և մարզի գյուղական շրջաններ, պահպանում են ջրահավաք կետերը, նորոգում և բարեկարգում այն շինությունները, որտեղ ժամանակավորապես տեղավորել են իրենց։ Բացի դրանից, հողագործների խնդրանքով զինվորները մի շարք տնտեսությունների օգնում են գյուղատնտեսական աշխատանքներում, որոնք, չնայած քաղաքը կազմալուծած գործադուլին, այնուամենայնիվ, շարունակվում են ինքնավար մարզի մի շարք շրջաններում։

Ստեփանակերտում իրադրությունը դարձյալ բարդ է։ Ձեռնարկությունների դարպասները փակ են, չի գործում հասարակական ու բեռնատար տրանսպորտը, բացառությամբ մի քանի երթուղային տաքսիների։ Դադարել է բնակելի ու հասարակական շենքերի շինարարությունը, չնայած քաղաքի բնակիչների՝ այդպիսի շենքերի մեծ պահանջարկին։ Երկաթուղային կայարանում կանգնած են չբեռնաթափված վագոններ։

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության այս տարվա հուլիսի 18-ի նիստի ընթացքում առաջադրված հարցերի ուսումնասիրման համար այսօր Ստեփանակերտ ժամանեցին ՍՍՀՄ Գերագույն սովետի Ազգությունների սովետի դեպուտատների ազգամիջյան հարաբերությունների հարցերի հանձնաժողովի անդամները՝ հանձնաժողովի նախագահ Ա. Է. Վոսի գլխավորությամբ։

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 4 հոկտեմբերի (ՏԱՍՍ)։ ՍՍՀՄ Գերագույն սովետի Ազգությունների սովետի ազգամիջյան հարաբերությունների հարցերով զբաղվող դեպուտատների հանձնաժողովը, որը գլխավորում է ՍՍՀՄ Գերագույն սովետի Ազգությունների սովետի նախագահ Ա. Է. Վոսը, տեղում ձեռնամուխ եղավ Լեռնային Ղարաբաղի հետ կապված պրոբլեմների ուսումնասիրությանը։

Կուսակցության մարզային կոմիտեում, ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների սովետի գործկոմում տեղի ունեցան հանձնաժողովի անդամների զրույցներ Ստեփանակերտի աշխատավորության, մտավորականության ներկայացուցիչների և մի շարք ձեռնարկությունների ու կազմակերպությունների ղեկավարների հետ։ ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատները կայցելեն արդյունաբերական ձեռնարկություններ, կմեկնեն մարզի շրջաններ։

ՍՍՀՄ Գերագույն սովետի Ազգությունների սովետի հանձնաժողովը նաև նախատեսում է Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ կուսակցական, սովետական մարմինների և աշխատավորական կոլեկտիվների առաջարկությունները ուսումնասիրել Բաքվում ու Երևանում։